

ՍԵՒԱՆԷՆ Ս. ՂԱԶԱՐ

ՆԱԽԱՄՈՒՏ

Եւ բուռոյց զամենայն ծառ գեղեցիկ
ի տեսանել Արարածոց:

Ինձ համար ուրիշ երազանք չկայ,
Եւ ոչ կոյս մոռայ ոսկի թեւերով.
Ինձ համար ուրիշ մանանայ չըկայ
Քան սէրն ըսկիհին երկնային ցօղով:

Ձեմ գըրեր քերթուած աշխարհի համար,
Օծուած վաղանցուկ ժըպիտով մարդուն.
Սուրբեր կանչեցի հազար ու հազար
Ըզգալու կեանքի նոր երանութիւն:

Ես բուռ մ'հող առի եւ ծաղիկ բուսաւ,
Ես արցունք տըւի անձրեւի փոխան,
Ի՞նչ ընեմ անունն, ինչ ընեմ համբաւ,
Ես կ'ուզեմ ըլլալ սրտի մուրացկան:

Ու բազկատարած անցնիլ այգէ այգ,
Գրկել ձիթենին, նոճիններ խոհուն,
Ես երկինք տանող իբրեւ սուրբ փափաք
Ընտրեցի ճըգանքն ու վիշտը թաքուն:

Քեզ համար միայն, ո՛վ օրհնեալ կղզի,
Առի մեր լեզուէն գունեղ ծիածան,
Մասիսի կողէն ափ մը հող առի,
Որ դուն ալ կոչուիս Փռքիկ Հայաստան:

*) Քերթուածներու այս նոր շարքին մէջ՝ զոր հաճոյքով կը սկսինք հրատա-
րակել, նուիրուած՝ Երնշ. Մխիթար Աբրահամ Ծննդեան Գ. դարադարձին, հեղինակը
հիւրընկալած է նաեւ նախապէս լոյս տեսած ինչ ինչ կտորներ:

ՊԱՐՏԵԱ ԳԵՂԵՑԻԿ

ԱՅԳԻՆ

Եկուր նստինք, սիրելիս,
Որթառունկին տակ դալար.
Քըրոջաբար դրկէ զիս,
Նոր համբոյրի պէս խոնարհ:

Նոյն ողկոյգէն փըրցընենք
Հատերն ոսկի խաղողին.
Եւ մեր այգին երանենք,
Յանուն պարգեւ տըւողին:

Տե՛ս խնձորները կարմիր,
Մանուկի պէս կը ժպտին.
Շատ են միրգերն հիւթալիւր
Բերնի համի պէս հարսին:

Անդին բացուած է արդէն
Կարմըրաշուրթ նուննին,
Հատիկներն իր գեղաշէն,
Ակունքի քար կը թըւին:

Ամէնուրեք հողն յուռթի
Կը զարդարէ մեր այգին.
Եւ երգելով կը ծաղկի
Կարմիրը մօտ կանանչին:

Մեր այգեպանն իր բահով
Ջուրին ահօս կը բանայ.
Ալիքն արծաթ պըտոյտով
Ոտքերուն տակ կը դառնայ:

Ինչ զովութիւն, ինչ պապակ,
Կարծես տունկերը կ'երգեն.
Ինչպէս սիրոյ ջերմ փափաք
Որ մօտ կ'անցնի սրտերէն:

Արփին ոսկի կը մաղէ,
Փռչիացած, անջօղափ,
Հեշտ թմրութիւն կը տիրէ,
Սիւզը չի գար ձեռքին տափ:

Բայց ես արեւ կը սիրեմ,
Երբեմն հայրերս պաշտեցին.
Շողերն աչքիս կը դընեմ,
Նըման փափուկ թաւիչին:

Եւ ինքն է որ դոյն կու տայ,
Հասունութիւն պըտուղին.
Իր մատներով կը բանայ,
Հազար աչքեր միասին:

Ոսկեխնձոր հուր կ'առնէ,
Կանկառը մոռ վերարկու,
Եւ ամէն բոյս կ'երազէ
Ոսկի աշուն տեսնելու:

Պարգեւներով լի այգին,
Աստուած օրհնէ, պահպանէ.
Նըման հացի հըրաչքին,
Թող փշրանքներ չըպակսին:

ՆՈՃԻՆԵՐԸ

Նոճիներ են, արձանացած կը նային,
Հորիզոնէն ալ անդին:
Կայմեր ըլլան կարապնագեղ կղզիին,
Որ նաւի պէս կը ծըփայ:

Իրարու մօտ եւ իրարմէ անբաժան,
Միանձնութիւն կը սիրեն.
Խոհերն ունին հին օրերու սրբազան,
Որ միշտ գաղտնի կը մընան:

Շուքերն իրենց սեւ վերարկու թաւիչէ,
Բռնած են դաշտ ու ճամբայ.
Ինչ փոյթ, արփին երանգներով չըպըճնէ
Ոչ շողն ուրախ երերայ:

Ո՛հ, նոճիներ, այստեղ երբեք սուգ չունին,
Ոչ ալ սուգի թաշկինակ.
Ձերդ կուսաններ, որ սրտերնուն մէջ ունին,
Պարկեշտութիւնն ամրափակ:

Ձեն տարածես թեւերն իրենց հողանի,
Որ ցոփութիւն կը թըւի.
Ամփոփ են միշտ, եւ կը նային աշխարհի,
Իմաստութեամբ վաղեմի:

Փոթորիկի դէմ չունին սուգ եւ աղմուկ,
Ոչ բուռն թափ թեւերու.
Կառչած հողին եւ խիտ առ խիտ ամպերուն
Կը փըսփըսան իրարու:

Վաղընջական յուշեր ունին իրենք ալ,
Խորհրդաւոր տարիներ.
Իրենց նըման վանականներ անայլայլ,
Լոյսն արցունքէն չեն բաժներ:

Ո՛վ նոճիներ, առանց քոցի կերոններ,
Տաճարին մէջ աշխարհի.
Սփռեցէք միշտ իմ վըրաս ձեր ըստուերներ
Իբրեւ շուրջառ տխրունի:

ՁԻԹԵՆԻՆԵՐԸ

Մեր հայրերն այս կղզիին մէջ տնկեցին
Հինգ ձիթենի իրար քով.
Եւ արմատները մեռնով կնքեցին,
Նարեկացին կարդալով:

Անոնք մեծցան, արշալոյսին նայելով.
Լայն երկնքի թեւին տակ.
Հանդերձն իրենց Աստուած հիւսեց արծաթով,
Շողերն ըրաւ բարունակ:

Եւ օդին մէջը բարձրացան հողանի,
Եղանակէ եղանակ.
Ձերդ սիրովառ արեւելեան պատանի,
Դէմքը դէպի արեգակ:

Գիտէին թէ իրենց արդար պըտուղէն,
 Խառն եղեամբի անարատ,
 Այօթարոյր օրհնեալ Մեռոն պիտ'օրհնեն
 Կնքելու աչք եւ ճակատ:

Հող են իրենք. մեզ պէս հող են իրենք ալ,
 Սիրտ մը թրծուած սիւգերով.
 Գիտէին թէ ապրիլն աչք է լուսափայլ,
 Որ չեն թաղեր մահերգով:

Եւ օր մ'յանկարծ ամէնքը մէկ ծաղկեցան,
 Ծաղկազարդի առաւօտ.
 Թեւեր առին, ժամերու մօտ թառեցան,
 Պահպանիչի մը կարօտ:

Ճիւղը ճիւղին նարօտ նարօտ կապեցին,
 Խաղաղութեան ձայն տըւին.
 Եկաւ Ողջոյնն ոսկեփետուր հըրեշտակ
 Ծաղկազարդի Կիրակին:

ԾԻՐԱՆԻՆԵՐԸ

Այգիին մէջ լոյս է իջած զատկական.
 Բոյրն օրհնութեան նոր տօնի.
 Անցան տրտում եւ ցուրտ ամպերը ձմրան
 Հառաչանքին հետ սրտի:

Սուրբ է կղզին ժամի նըման զարդարուած,
 Ծիրանիով ըսպիտակ,
 Սէրը դարնան մարդկային դոյն է առած,
 Կը թըւի նոր պատարագ:

Լոյսը կու տայ այս ծառերուն սրբութիւն,
 Զերդ մկրտուած նորածին.
 Առանց իրենց պիտի չըգար նոր դարուն,
 Ոչ ճերմակ օր կղզիին:

ԿԱԿԱԶՆԵՐԸ

Ես կը սիրեմ կակաչներն
 Ինչպէս թուշերը մանկան.
 Իբրեւ համբոյր, իբրեւ սէր
 Գեղեցկութիւնն են դարնան:

Բռնած են դաշտ եւ այգի,
 Հազարաւոր, բիւրաւոր,
 Մէկը միւսին կը նայի,
 Կոյսը կոյսին դէմ աղուոր:

Ծաղկէ ծաղիկ կը թռչին
 Ճառագայթներն արեւուն.
 Եւ անգամ մ'ալ կը վառին
 Երկինքին մէջ ասմաղուն:

Զեփիւռն երբոր կը հասնի,
 Ծափ կը զարնեն ժպտադին.
 Եւ մեղմ խարչափ մը կ'անցնի
 Յնծութեան հետ միասին:

Կարմիր, կարմիր եւ կարմիր
 Կայսերական ծիրանի,
 Ուր հորիզոնն ոսկեծիր
 Հըրաչքներով կը շեցուի:

Կարծես կղզին բովանդակ
 Ըլլայ հսկայ ծաղկաման.
 Եւ իր բուրումն անապակ,
 Տենչն է սրտին վանական:

Թիթեռնիկներն ոսկեգոյն
 Դադար չունին սիրելէ.
 Զըկայ ուրիշ տեղ դարուն,
 Այսքան մօտիկ սրտերուն:

Շարքերն անոնց չեն քանդեր
 Ծանրը քայլեր մարդկային.
 Լոկ ծառերու ըստուերներ
 Թեթեւօրէն կը հանգչին:

Այստեղ երկինքն ուրիշ է,
Հազար գոյնով ծիածան.
Որ լիճ է լիճ կ'երկարի
Բոցը ջահի մը նրման:

Եւ օր մ'յանկարծ խենթ քամին
Մէկիկ մէկիկ կը մարէ.
Ինչպէս մոմերը ժամին
Երբոր կ'անցնի Կիրակին:

ՎԱՐԴԵՐԸ

Ի՞նչ հեշտ է ձօնել վարդեր եկուորին,
Արեւուն, լուսնին, անծանօթ մարդուն.
Ի՞նչ հեշտ է իր բոյրն ողջունի տեղ տալ,
Կարմիր թերթ դնել ծովացող կուրծքին:

Թոյլ տալ որ տանին իրենց աշխարհներ,
Թերեւէ վարդի գոյն եւ երգ չունին,
Թերեւէ ձիւն կայ այդ երկիրն յաւէտ,
Կարօտ են վարդի անունին, տեսքին:

Այս կողին վարդի դըրախտ կոչեցին,
Այս խօսքն էր աղու՝ երբ հողն իր բերին
Այն աշխարհէն ուր Աստուած վարդ բուսցուց.
— Ձեր սրտերն, ըսաւ, վարդերով բացէ՛ք —:

Եւ ես նստեցայ ճամբաներու մօտ,
Իմ հոգիս բացի իբրեւ թուղթ ճերմակ,
Ձեմ գիտեր թէ ով վաղը պիտի գայ
Կարդալու խոհերս եւ զարկը սրտիս:

Սակայն ես գիտեմ, անոյշ ընթերցող,
Թէ որքան սոխակ երգեց ինձ համար,
Քանի վարդերու թերթեր համրեցի,
Եկող դացողին եղբայր ըլլալու:

ԴԱՓՆԵՎԱՐԴԵՐ

Դափնեւարդեր, դափնեւարդեր
Երբոր կ'անցնիմ ձեր մօտերէն,
Մայիսի պէս կը ժպտիք,
Սրտի նրման կը վառիք.
Երբոր կ'անցնիմ ձեր մօտերէն:

Ու կ'երկարէք մատները ձեր
Անգամ մը գէթ դաշելու.
Աչքերուս շուք բռնելու,
Երբ կ'երկարէք մատները ձեր:

Ապա ճըշուն ետ կը դառնաք,
Բոյր առնելով քերթուածներէս.
Համբոյր կ'առնէք իմ աչքերէս,
Ապա ճըշուն ետ կը դառնաք:

Ես կ'երազեմ ձեզ ամէն օր
Ցնծութեան թելը մըտած,
Ձեր թերթերուն բոցիլ կապած
Ես կ'երազեմ ձեզ ամէն օր:

Ու կը դառնաք, կը դառնաք միշտ
Կղզիին շուրջն հովին հետ.
Արդեօք սոխակ էք երգաւէտ,
Որ կը դառնաք, կը դառնաք միշտ:

Ո՞վ ձեզ կարեց նուրբ մատներով
Կարմիր գոգնոց ոսկեծայր.
Աղջիկներու լուսանկար,
Ո՞վ ձեզ կարեց նուրբ մատներով:

Արեւն ոսկի թելեր տըւաւ,
Լուսնակն արծաթ ու գիշեր,
Մարդը տըւաւ ժրպիտ ու սէր.
Արեւն ոսկի թելեր տըւաւ:

Ինչպէս օրհնեմ այն սուրբ ձեռքեր,
Որ ձեզ սիրոյ մէջ տնկեցին.
Ձուրն աչքերով արբուցին.
Դափնեւարդեր, դափնեւարդեր: